

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ


Ե. ՓՈՐՈՍՏԵԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ րազմի

ԳԱՀԻԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ողջ դահիւն 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ

Տարեկան Տրակի 20

Վեցամսեայ « 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը Խնայարարական վրայ է :

Խնայարարական ուղղուած գրութիւնք է՝ չ'են տրուիր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN

Direct.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՋԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բաժանորդագիրը որ կեղ Տնօրինութեան հասցէին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն ալ ջերմասպէս կը խնդրուի, որ բարեխաճիկ նախորդ տարիէն մնացեալ պարտոց կցեղով որ կեղ նախ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեցրջանի բաժանորդագիրը, եւ հարկ չը բողոյ մասնաւոր դիմումներու, որով ճոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ արդէն բազմազբաղ Տնօրինութեան :

ԳՈՐԾ ԵՒ ԽԻՂՃ

Տխար թ. Պատուեան, քաջածանօթ գերասանը, արդեօք կ'զգայ որ եգիպտացեան հայութեան համակրութիւնը կորսնցնելու վրայ է, և դեռ ժամանակը չ'անցած չ'ուշաբերի, թերեւս երկայն տարիներ, և աշխարհիս ամեն կողմը, ուր հայ մը կը գտնուի, դառնապէս պիտի ողբայ իր միանխորհուրդ ձեռնարկը, զոր յուսով ենք թէ ինք առաջինը պիտի ըլլայ մերժող, եթէ պահ մը լրջօրէն խորհի :

Այն պահուն ուր իր վաղեմի արհեստակիցներէն միոյն որդին, որ ինքն ալ արհեստակից մ'է, դառնապիտի հիւանդութեամբ մը կը տառապի այնպիսի երկրի մը մէջ, ուր հիւանդ ունեցողը միայն գիտէ ամենահարկաւոր և միանգամայն ամենաչին առարկայի մը, նիւթի մը անհաւատարի բարձր գինը, և ուր ինքը՝ Պ. Պատուեանն ալ՝ անկողնոյ ծառայից և շուսյաբար եղբայրական օգնութիւն գտաւ իր արհեստակիցներուն կողմէն, որոնց թուոյն մէջն են նաև այսօրուան հիւանդ Պ. Ե. Պէնլեանը և անոր վշտահար հայրն ու ընդերք. այն պահուն ուր եգիպտոս գտնուող գերասանաց խումբը ամենայն համարախոթեամբ կը պատրաստուի ներկայացում մը - տարւոյս առաջինը - տալ ի նըպաստ հիւանդին, ինչ կը նշանակէ Տխար թ. Պատուեանի հակաընկերային, հակամարդկային և ապերախտական նպատակը, զոր կ'ուզէ ի գործ դնել, ազգարարե-

լով շարք մը ներկայացումներ, որոնց առաջինը պիտի տրուի ի նպաստ Պ. Ե. Պէնլեանի ազգարարութեամբ անդրանիկ ներկայացումէն ճիշտ երկու օր առաջ . . . :

Տխար թ. Պատուեանն ալ յայտնաբերէր վարձատրել իրեն եղած ընդունելութիւնը նոյն իսկ այն տառապեալին ընտանեաց կողմէն. բայց թողունք զայս. երախտագիտութիւնը քաղցրաբոյր վարդ մ'է, որ ամեն հողի վրայ չ'ընտնի . . . : Գոնէ ընկերութիւնը պարտք չ'էր դնել Տխար թ. Պատուեանին վրայ միանալ՝ գէթ այս պարագային մէջ՝ իր ծերունի արհեստակցին հետ, փոխանակ անոր այսքան մեծ հարուած մը տալու փորձեր ընելու . . . :

Եթէ միայնակ գործելու, և այս կերպով իր արժանիքը մեծցնելու մարմալներ ունէր, միթէ չ'էր կրնար իր ներկայացումը սկսիլ երկու օր ետքը, փոխանակ երկու օր առաջ . . . :

Հացի խնդիր, պիտի առարկուի թերեւս : Բայց հացի խնդիրէն առաջ գեղի խնդիր կայ . . . : Տխար Պատուեանն կրնար երկու օր ևս առանց հացի մնալ - վիճակ որմէ՝ բարեբաղդաբար՝ շատ վեր է - բայց հիւանդ մը երկու վայրկեան չ'կրնար առանց գեղի մնալ . . . :

Ինչ որ ալ ըլլայ, Պ. Պատուեանն պէտք է ապահով ըլլայ որ խիստ անկատար կերպով ուսումնասիրած է Հայկական սիրտը կարծելով թէ զգայուն և բարեխէր Հայ սիրտեր - անոնք որ ճշմարտապէս Հայ են - պիտի նախընտրեն ժամանց մը, զոր իրենց պիտի հայթայթէ ինքնամուլ մը, այն ներքին գոհունակութեան և անպատում բերկրութեան, զոր պիտի վայելեն նպատակով տառապեալի մը սփոփման հեշտաւէտօրէն զբօսնելով հանդերձ :

Եւ եթէ օրը հասնի, Պ. Պատուեանն պիտի տեսնէ, բայց չ'տ ուշ, որ իրեն կը պակսին թէ՛ օգնական և թէ՛ հանդիսական . . . :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

« ՆՄԱՆ ԶՆՄԱՆՆ ՍԻՐԷ »

Հոգեւեալ սիրաբանութիւն Ի քիւր Տեսիլք եւ ի Լոյսեմ պատկերս 20ՆԵԱՂ ԱՌ « ԱՂՔԱՏՍ ՀՈԳԻՈՎ »

Տեսարանն է ի Պէյն-էլ-Սուրեկ Պաշտօնական շէնքի մը շուրջը :

(Թէեւ խաւարահալած արեւը երկիրս ողորդած է իր լուսաշողջող ճառագայթներով, բայց հոն՝ այդ շէնքին բոլորտիքը՝ աղմուկային խա-

ւար մը կը տիրէ, շնորհիւ հաստ եւ սեւ վարագոյրներու, որոնք լոյսը կ'արգելին հոն մտնելէ) (Վարագոյրին մէկ ծայրը շտապաւ կը բացուի, եւ « ՆՈՐ-ՕՐ » խաւարին մէջ կը խուժէ՝ շնչասպառ, պատտուած զգեստով, մացառացեալ մազերով, բոպիկ եւ սղմաթաթախ ոտքերով, չլմորած աչքերով. նա գաճաճ է, կաղ ու սապատող) :

ՆՈՐ-ՕՐ (երկայն շունչ մ'առնելէն ետքը, մեկուսի) - Փառք վարիչներուս, այս անգամ ալ յաջողեցայ հոս հասնիլ առանց ճամբան ցնդելու կամ կուրանալու. չ'եմ գիտեր ինչ բան է այս, բայց ես քնազգ մ'ունիմ լոյսն ատելու . . . Ժառանգական ախտ արդեօք . . . հոս, սանկ միտութեան մէջ, տեսա՞ր մի, հանդարտ, հանդարտ շունչ կ'առնեմ, կը հրճուիմ, կ'ապրիմ, հազար ու մէկ խաղեր կը հանեմ, կ'ոտոտոտեմ կաշաղակի պէս, կը ցատկուտեմ կապիկ պէս, կը գեղգեղեմ թուփակի պէս ո'չ կաղութիւնս կ'երեւայ, ո'չ գաճաճութիւնս . . . մինչդեռ վարագոյրին միւս կողմը, սա արեւ կոչուած անամօթ հետաքրքիրն աչքին տակ, խերս կ'անիծուի . . . Ընդուն կը զգուցուի, ոտքերս կը կաշկարստան, ուղեղս կ'եռայ, ապուշ, այլանդակ բան մը կ'ըլլամ . . . ցնցոտիներս կարծես վրայէս կը թափին եւ ես կը սարսափմ թերեւս ցուրտէն՝ այդ այրող տոչորող ճառագայթներուն տակ . . . բայց հոս, կեղ ֆէյֆիլ կեղ, օ՛խ . . . (պահ մը կ'երկնայ, իր անդամները ձգտելով, և գոհունակութեան հառաչներ արձակելով. յետոյ յանկարծ ոտք կ'ելլէ) այս աղէկ, բայց եւ այնպէս ժամանակ կորսնցնելու չի գար, պէտք է գործել, մարդ վրայ չ'եկած, թէեւ հոս այն կողմէն մեծ վախ չ'կայ . . . եւ եթէ չ'եմ ուղեր ինքնասպան ըլլալ, պէտք է շտապել . . . Ինծի ըսին թէ հոս, սա շէնքին սննեակներէն մէկուն մէջն է . . . բայց ո՞ր սենեակ . . . դռնապանին հարցնեմ. (պատուհանէ մը նայելով) նա, այն երանելին ալ կը քնանայ . . . դրաւ կը դնեմ որ տան քնակիչներուն ամենքն ալ խոր քնոյ մէջ թաղուած են հիմայ . . . տիրող միտութեան շնորհիւ եւ որովհետեւ այս խաւարը երբէք չը պիտի փարատի, անոնք ալ երբէք չ'պիտի արթնան . . . միայն թէ եղեւնագործութեան վարժ ձեռք մը սա վարագոյրը չ'վերցնէ . . . պ'ըր . . . սատանային ականջը խուլնայ . . . Հիմայ ինչ ընելու է . . . հո՛, լաւ միտքս եւ կաւ . . . սիրահարներուն քունը թեթեւ կ'ըլլայ՝ կ'ըսեն . . . անձնական փորձառութեամբ ալ գիտեմ ասիկա . . . սէրը չ'է՞ որ զիս արթուն կը պահէ այս թմրեցուցիչ միջնորոտին մէջ . . . սիրահարները երաժշտութիւնն ալ կը սիրեն . . . ուստի անուշ անուշ երգեմ . . . անպատճառ սիրուհիս պիտի գայ, մինչդեռ միւսները պիտի շարունակեն խորգալ, մինչեւ որ ստամոքսին տանջէ գիրենք . . . : Ուստի երգենք :

(Նոր-Օր կը հազայ, ձայնը կը կազմէ եւ կ'երգէ)

Մտիկ ըրէք ձայնս անաւոր, Ծնունդ եմ ես խորհրդաւոր, անուն մ'ունիմ խիստ փառաւոր, Ինծի կ'ըսեն ջքնաղ Նոր-Օր : Հազար վայ անոր որ չ'ճանչնար Նոր-Օր :

Երբ մանկիկը չ'ընէ օր-օր ,
անքուն անցնի օրը բոլոր ,
մի' կ'երցընէք , բաժն անոր
ահա կուգայ հիմա Նոր-Օր :
Հազար վայ անոր
որ չ'սիրեր Նոր-Օր :

Հիւանդները վտանգաւոր ,
խոնջած յոգնած եւ գործաւոր ,
խակոյն կ'առնեն քուն գորաւոր .
միայն բաւ է սեռնել Նոր-Օր :
Հազար վայ անոր
որ չ'սեռնէր Նոր-Օր :

(Այս միջոցին դուռը մեղմիւ կը բացուի ,
եւ դուրս կ'ելլէ Գլխայ , Հրաշագեղ եւ ազամանդ-
ներով զարդարուած կին մ'է նա' հերարձակ .
աւերակաց վրայ նստած վշտակիր եւ խոհուն
Մայր Հայաստանի մի տիպարը : Մանրաքայլ կը
յառաջանայ դէպի ձայնին կողմը) :
(Նոր-Օր կը շարունակէ երգել)

Ամեն աղքատ կամ ունեւոր
թէ' աւագակ' թէ' դատաւոր
թող ինձ դիմեն , ապահով որ
չիք փրկուի ինչ քայլով : Նոր-Օր :
Հազար վայ անոր
զոր կ'ատէ մեծ Նոր-Օր :

Ըլլայ սողուն , թէ' թեւաւոր ,
Գլխարկաւոր , վեղարաւոր ,
Անպարտ ըլլայ կամ մեղաւոր
Պէտք է պաշտեն միայն Նոր-Օր :
Ինչու երեսկ անոր
զոր կը սիրէ Նոր-Օր :

Գլխի՞ . . . — Կարծեմ նոր դեղ մ'է ծախու-
ծը . . . արդեօք իմ ցաւիս ալ դարման կ'ըլլա՞յ :
Ա'խ , զաւակներս . . . (կուլայ) :
Նոր-Օր . . . — (մեկուսի) Կարծեմ ինքն է
(տիկնոջ զարդարանքը զննելով) : Այ'ո , ինքն
է , վերջապէս արթնցաւ ձայնիս անուշութենէն ,
կեցցէ բաղդ իմ . . . (բարձր) բարեւ , տիկին :
Գլ . . . — Աստուծոյ բարին , զաւակս : Դեղ
ծախողը դու՞ն ես :

Նոր . . . — (զարմացած) դե՞ղ . . . ոչ :
Գլ . . . — Հապա երգողը ո՞վ էր :
Նոր . . . — Երգողը ես եմ :
Գլ . . . — Դեղի երգ չ'է՞ր :
Նոր . . . — Ո՛չ , կամ այ՛ո ինչպէս որ կ'ու-
զէք (մեկուսի) շողքորթելու է : (Բարձր) նոր
երգ մ'է զոր ես յօրինեցի , հիմայ , երբ հոս կը
նստէի . . . երգ մը որ ո՛չ սկիզբ ունի եւ ո՛չ
վերջ , եթէ կուզէք շարունակեմ . . . :

Գլ . . . — (Նոր-Օրը շոյելով) Սիրուն զաւակ ,
ո՛չ , չ'եմ ուզեր , կը յոգնիս . . . :
Նոր . . . — (մեկուսի) շտապե՛ք զինքը (բար-
ձր) սա յանգիւրուն ճոխութեան , հարստութեան ,
կոկոկութեան ուշադրութիւն ըրի՞ք , տիկին , մա-
նաւանդ վերջին վանկերը . . . :
Գլ . . . — (մտազբաղ) Այ՛ո , այ՛ո , վերէն ի-
վար զիրար լաւ կը բռնեն , իրարու խիստ յար-
մարած են . . . բայց , տղաս , ձայնդ ինչո՞ւ
խապոտ է . . . պա՞ղ ես առեր :

Նոր . . . — Խոստ . . . վասն զի մօտէն ը-
սեցիք , եթէ հեռուէն լսէիք զմայրելի պիտի
գանէիք , տիկին . . . :
Գլ . . . — (խնդալով) Հանճարեղ ես . պզտիկ ,
դուն որուն աղան ես :
Նոր . . . — Իրաւ որ չ'իյտեմ , տիկին . . . :
Գլ . . . — Լեզուանի ալ ես . . . քեզ ո՞վ մեծ-
ցուց :

Նոր . . . — Դայեակս :
Գլ . . . — Անունն ի՞նչ է :
Նոր . . . — Լաւ չ'եմ յիշեր . . . բայց բիւր-
բիւրոցէն առնուածի պէս բան մ'է :
Գլ . . . — Անոր քո՞նք ես հիմայ :
Նոր . . . — Ո՛չ , դայեակս գնաց , հիմայ ու-
րիշ էֆէնտիլ մը կը ծառայեմ . . . :
Գլ . . . — Այն էֆէնտիլն անունն ալ չ'ես
զիտեր :

Նոր . . . — Ուշադրութիւն ըրած չ'եմ , բայց
կարծեմ քահանաներու հետ խնամութիւն ունի :
Գլ . . . — Ձարմանալի տղայ . . . խեղճ լըժ-
եալ . . . մազերդ ալ չ'են սանտրուած , զգեստդ
պատուած . . . խեղճ , խեղճ . . . :
Նոր . . . — Տիկին , դայեակս առաջ զիս կը

խնամէր , կը սանտրէր , կը հագուեցնէր , ինք
չ'էր ուտեր ինձի կը կերցնէր . . . բայց հիմա ,
ինչպէս կը սեռնէք , այս վիճակին մէջն եմ ,
տիկին . . . :
Գլ . . . — Ինչո՞ւ , այնքան կծծի է էֆէն-
տիլ :

Նոր . . . — Ո՛չ , ընդհակառակն , բայց կար-
ծեմ իր զբաղմանց պատճառաւ ժամանակ չ'ունի
իմ վրաս խորհելու . . . :
Գլ . . . — Ինչ եւ իցէ , տղաս . . . դուն աշ-
խատէ՞ որ մարդ ըլլաս . . . :
Նոր . . . — Այ՛ո , տիկին . . . բայց ձեզմէ
բան մը պիտի խնդրէի . . . :
Գլ . . . — Կը հասկնամ . . . (մեկուսի) ես
լքեալ մայր մը , սա լքեալ զաւակ մը . . . ո՞վ
զիտէ վերջը ինչ պիտի ըլլայ . . . որո՞միք :

Նոր . . . — Ի՞նչ կ'ըսէք , տիկին . . . :
Գլ . . . — Ո՛չ ինչ . . . (ձեռքը գրպանէն հա-
նելով եւ Նոր-Օրին բան մը տալ ուզելով) ա՛ն
սա , պզտիկ , լսելուք , սիրմի՛ք կ'առնես , կամ
տոպած ինչպէս որ կ'ուզես . . . :
Նոր . . . — Շնորհակալ եմ , տիկին , բայց ինչ-
պէս ըսի , շնորհիւ էֆէնտիլիս առատածեւուն-
թեան , ամբողջ ժամանակս խաղալիքներով եւ
շաքարեղէններով կ'անցնեմ կօր . . . :
Գլ . . . — Ըսել է մայր չ'ունիս , հէ՞ . . . :
Նոր . . . — Ծիշան ըսելով , կ'ըսեն թէ մայր
ունիմ , իմ բազմանդամ ընտանիքս ապրին ան-
դին ցրուեր է , բայց ընտանիկան տունը Պա-
ղար-Մուրուրի մէջ է եղեր , եւ չ'եմ գիտեր թէ
մայրս ինչու զիս իր քովը չ'առնեմ . խօսք մէ-
ջերնիս , տիկին , կարծեմ թէ (ոտքին մատուը-
նեւուն վրայ բարձրանալով Գլխային ականջին
կը փսփսայ) :

Գլ . . . — Լռէ՛ , տղայ , առ քու հասակիդ հա-
մար ամօթ են ատանկ խօսքեր . . . :
Նոր . . . — (սէգօրէն) Տիկին , խեղճ , հան-
ճարը , տաղանդը , խանդը եւ սէրը , վերջապէս
սէրը (մեկուսի) լաւ շեշտեմք (բարձր) այս՛ սէ-
րը , մանաւանդ սէրը հասակ չ'են ունենալ ,
կամ աւելի ճիշտ ըսելով ամեն հասակէ են :
Ըսածս , տիկին , փորձով պիտի հաստատեմ եթէ
հասկը ըսել ինձ թէ որո՞ւ հետ պատիւ ունիմ
խօսակցելու . . . (մեկուսի) խնդրե՛ք չ'պարզած
պէտք է վտանգ ըլլալ թէ սա նոյն ինքն տիկին
գլխայն է :

Գլ . . . — Ինչ թափ . . . ինչ աւելն . . . :
Նոր . . . — Ձեր պատասխանին կ'ըսպասեմ ,
տիկին . . . :
Գլ . . . — Տղայ , իմ անունս Գլխայ է . քեզի
ինչ կ'ըսեն :
Նոր . . . — Ինձի Նոր — Օր կ'ըսեն :
Գլ . . . — Լաւ . հոս ի՞նչ կ'ընէիք . . . :
Նոր . . . — Ձեզի կ'սպասէի (մեկուսի) քօշ
ըլլանք :

Գլ . . . — Ինձի . . . եւ ինչո՞ւ :
Նոր . . . — Ձեզ տեսնելու եւ ձեզի կարեւոր
խնդր մը հաղորդելու համար . . . :
Գլ . . . — Դուն ի՞նչպէս գիտցար որ ես հոս եմ :
Նոր . . . — Ես ամեն բան գիտեմ , տիկին ,
ինձի համար գաղտնի բան մը չ'կայ արեւուն
տակ . . . արեւն վեր թիւրեւ : Դուք ալ իմ ա-
նունս լսած ըլլալու էք , անշուշտ . . . :
Գլ . . . — Հաւատա՞ , ո՛չ :
Նոր . . . — Ի՞նչպէս . . . ես աշխարհիս չորս
կողմը հանրածանօթ Նոր-Օր , միայն հոս , սա
քթիս տակ անծանօթ ըլլա՞մ , այդ անկարելի
է . . . :
Գլ . . . — Բայց եւ այնպէս շատ կարելի , ինչ-
պէս կը տեսնես . . . շատեր ալ այդ գաղտնա-
րիդ կը ծառային եւ կը վնասուին :
Նոր . . . — (խոհուն) հա՛ . . . ինչեւիցէ ,
տիկին , եթէ կ'ուզէք մեր խնդրոյն գանք :
Գլ . . . — Այո՛ , ըսէ՛ նայիմ , ի՞նչ կ'ուզէիք
ինձմէ :

Նոր . . . — Եւ եթէ ուշադրութեամբ մտիկ
ընէք , պիտի տեսնէք որ ձեր սրտին համեմատ
պիտի խօսիմ . . . :
Գլ . . . — Հայտէ՛ նայիմ :
(Նոր-Օր յանկարծ Գլխային ոտքը կ'իջնայ
ձեռնամած՝ գոչելով) :
Նոր . . . — Ո՞վ էակ զարմանահրաշ , ո՞վ հը-
րեշտակ մարմնացեալ , ո՞վ կին սքանչացուցիչ ,
դիւթիչ , կախարդիչ , հմայիչ , զգլխիչ , ո՛չ ա-

պախե՛ն ես քեզի համար կ'այրիմ , կը մրկիմ , կը
հիւծիմ , կը մաշիմ . քու սէրդ զիս կը մեռցնէ ,
քու նայուածքդ զիս կը խելագարէ , քու հասա-
կըդ զիս կը յիմարացնէ , քու դէմքդ զիս կը հա-
լեցնէ , գթութիւն , ո՛հ , գթութիւն . . . :
Գլ . . . — Տղան խնդրեցաւ . . . :
Նոր . . . — (միշտ նոյն դիւրբին մէջ) ո՛չ չը
խենդեցայ , ո՞վ գիցուէի , (մեկուսի) ուրիշի՞նչ
գովեստ կ'ընամ տալ (բարձր) ո՞վ խաւարապատ
կղզւոյս կալիբոսն , խօսքիս միտ դիւր , ես չը
խենդեցայ , եւ ապացոյցն այն է որ՛ այս ըն-
թացքովս քու փափուկ սրտիդ բաղձանքը կը
կատարեմ . . . : Այ՛ո , ես լաւ գիտեմ , բայց
քու համեստութիւնդ քեզ կ'արգիլէ խառնա-
նելու թէ դուն ալ ինձի համար կուլաս կողբաս ,
ինչպէս երբեմն կալիբոս Ողբուեստի համար . . .
դուն իմ սենցովս ինքեղ ես , եւ եթէ ես այս
անձնութեան թիւնը չ'ունենայի դուն պիտի մեռ-
նէիք . . . արդ ա՛ն զիս եւ բժշկուէ . . . :
Գլ . . . — Հանդարտէ՛ , տղաս , ոտք ել նայիմ ,
ինչ կ'ուզես :

Նոր . . . — (Ոտք ելլելով) քեզ կ'ուզեմ ինձի
կին . . . :
Գլ . . . — Բայց դուն դեռ մանուկ մ'ես . . . :
Նոր . . . — Տիկին , քիչ առաջ ըսի որ սէրը ,
մանաւանդ սէրը հասակ չ'ունի . . . :
Գլ . . . — Այո՛ , վէպերու մէջ , բայց իրական-
նութեան մէջ պէտք է որ ամեն բան իր հասա-
կը , իր ժամանակը ունենայ . . . :
Նոր . . . — Ես վէպ , իրականութիւն չ'եմ գի-
տեր . . . քեզ կուզեմ . . . :
Գլ . . . — (խնդալով) Բայց եթէ ես քեզ չ'եմ
ուզեր . . . կամ արդէն ամուսին մ'ունիմ . . . :
Նոր . . . — Այն ատեն ուրիշ բան մը կ'ընենք :
Գլ . . . — Ի՞նչ :

Նոր . . . — Բու գոհարեղէնդ , գոյքերդ , ունե-
ցածդ , չ'ունեցածդ ինձի կուտաս , եւ դուն ա-
զատ կ'ըլլաս զիս առնելու կամ չ'առնելու :
Գլ . . . — (միշտ խնդալով) Այդպիսի սովո-
րութիւն մը չ'եմ գիտեր :
Նոր . . . — Սովորութիւն չ'է « գրամօժիտի
բարեփոխեալ զբութիւն » անունով Նոր Օրէնք
մ'է տիկնայ :
Գլ . . . — Իմաստալից օրէնք մը կը տեսնեմ ,
սա քիչ մը բացառէ նայիմ . . . :
Նոր . . . — (փքանալով) Ահաւասիկ , տիկին ,
մինչեւ հիմայ ի՞նչ կ'ընէիք ամուսնանալու հա-
մար . . . աղջիկ մը կ'առնէիք անոր փարան
առնելու նպատակաւ , այնպէս չ'է . . . : Կերե-
ւայ որ այս գործողութեան մէջ հարսնցունին
կամքը բռնարարել կայ եղեր , եւ որովհետեւ ա-
զատութեան դարուն մէջ կ'ապրինք , հարկ ե-
ղաւ բարեփոխել այդ սովորութիւնը , մենք ալ
բարեփոխեցինք՝ այսօրուէն սկսեալ . . . :
Գլ . . . (Լըջօրէն) Ա՛ . այսօրուէն սկսեալ
(մեկուսի) կը հասկնամ (բարձր) եւ ի՞նչպէս
բարեփոխեցիք :

Նոր . . . — Հիմայ աղջկան մը կամ կնոջ մը
կ'ըսենք , « ես կուզեմ քեզ առնել քու այսչափ
զբամովդ , եթէ դուն զիս չես ուզեր վնաս չ'ու-
նի սիրուդ մի հատցուներ , կիսուիք , զբամը
միայն տուր ինձի եւ դուն ուզածդ ա՛ն :

Գլ . . . — Հասկցայ . . . ասկէ աւելի ողջ
տրամաբանութիւն չ'ըլլար . . . :
Նոր . . . — Անանկ չ'է . . . :
Գլ . . . — Դուն ի՞նչ կ'ուզէիք ինձմէ :
Նոր . . . — Նոյն հարկերով կը կրկնէի , տի-
կին , ես քեզ կը սիրեմ քու ունեցածիդ համար ,
եթէ դուն զիս չ'ես սիրեր , հոգ չ'է - ունեցածդ
տուր եւ ազատ եղիք :

Գլ . . . — Բայց ու՞րիկ ծնաւ քու այդ սէ-
րով :
Նոր . . . — Մեր իրարու նմանութենէն , ինչ-
պէս կ'ըսէ փիլիսոփայն կամ բարոյախօսը , կամ
կրօնքը , վերջապէս մէկը՝ « ՆՄԱՆ ՁՆՄԱՆ
ՍԻՐԷ » :
Գլ . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

Նոր . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

Նոր . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

Նոր . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

Նոր . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

Նոր . . . — Եւ դուն կը կարծես որ մենք իրա-
րու կը նմանի՞նք :
Նոր . . . — Երկու կամ իլ շուրի պէս . . . :
Գլ . . . — Բայց ես չ'եմ տեսներ . . . :
Նոր . . . — (ծանրօրէն) տեսնելու հարկ չ'կայ
տիկին , երբ ես կ'ըսեմ թէ իրարու կը նմա-
նինք , դուք պէտք է հաւատաք որ կը նմանինք :
Գլ . . . — Ատիկա չ'էի գիտեր . . . քիչ մը

մասնակցի որպէսզի անպամ մ'ալ գիտեմ քու գեղանի դէմքը :

ՆՈՐ . — (մեկուսի) համոզեցի , , ես արդէն զո՞վ համոզած չեմ որ , , :

(Նոր-Օր սիրալով կը մտենայ : Գլխու աւնոր ականջէն կը բռնէ եւ ձեռքով լաւ տիոց մը կուտայ անոր ետեւը) :

ՆՈՐ , — (լալով) Մայրիկ , դայեա՛կ , օգնութիւն , , (հեծկտալով կը փախչի) :

ԳԼ , — (Տրտմութեամբ համակուած) ապերախ զաւակներ , գոնէ ձեր արժանապատուութեան նախանձախնդիր եղէք , զի ասանկ ստահակներուն նախատինքններէն հեռու պահելով , , անգո՛ւթ զաւակներ , , (լալով կը հեռանայ) :

Պ .

ՔՆՆԱԴՍԱԿԱՆ

ՓՈՒՐԳԻՒԱ 1876 ԷՆ Ի ՎԵՐ

ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԹԻԻ

ՀԵՂԻՆԱԿ Ս . ՓԱՓԱԶԵԱՆ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

ԳՍԵՉԱՅԻՆ ՎԻՃԱԿ . ԵՐ . 7 Հատ . 3 . — Գանձային ճիւղին մէջ Սուլթան Համիտի յաջողութիւնը գերազանցած է եղեր ուրիշ ամեն վարչային ճիւղերու մէջ ձեռք բերուած յաջողութիւնը : Այս կարգի յաջողութեանց մէջ , հեղինակն կը յիշէ ինչ ինչ պարտուց հատուցումը , գործիքնակ , Պալատի լուծարարական (իր բառով , եւայլն . եւ խնամքով զանց կ'ընէ յիշել ա՛յն նորանոր պարտքերն որք եղած են անկէ ի վեր : Իսկ Հանրային Պարտուց Վարչութեան հաստատութիւնը գործիքնակն կը զնն սուլթանի քաղաքաշինութեանց շարքին մէջ , պարզապէս միջազգային պահանջմամբ եւ ազդեցութեամբ իրագործուած յաջողութիւն մ'է : Համոզուելու համար մեր ըսածին , հեղինակն պէտք է ես երթայ մինչեւ 1882 երբ օտար պարտապահանջք թուրքի վրայ իրենց վտանգութիւնը բնորոշելին վերցուցած մաքսային եւ Յանուղղակի տրոց հասոյթներ ձեռք անցուցին իբր երաշխաւորութիւն : Իսկ ծխախոտի եւ թէմպէքի մենավաճառի յաջողութիւնք ցոյց կուտան պարզապէս թէ թուրքի բոլորովին պակարող է ինքնավարութեան . քանզի այն ամեն վարչութիւն եւ ձեռնարկ որ օտարականաց ձեռք կը գտնուին անբաղաւորելի առաւելութիւններ կ'ընծայեն անոնց՝ որ լոկ թուրքի վարչութեան կը վերաբերին : Հաշիւ եղած է որ ծխախոտի տասնապատիկ աւելի հասոյթ կրնայ տալ տէրութեան գանձուն եթէ փոխանակ մենավաճառի հաստատութեան՝ գործութիւններն շնչելու մէկ գարտնիքը գտնէր Պր . Փախազեանի սիրեցեալ Սուլթանի կազմաւորութիւնը :

Սակայն ի՞նչ բարեբաւտիկ վիճակ է այն երկրին վիճակն՝ ուր տէրութեան պարտքերը կը վճարուին ժողովրդեան հարստահարութեամբ եւ նորանոր ու բազմապատիկ ազդեցութեամբ հաստատութեամբ , ա՛յնպէս որ տէրութեան գանձային անանկութիւնը յապաղելու համար այսօր ժողովուրդն ինք հասած է սրանկական վիճակի : Պարտն հեղինակը եթէ քննէր պարտքերն հաստատուող գումարներու ազդեցութիւնն՝ պիտի համոզուէր թէ այդ ազդեցութեան չորացումը , այն է , ժողովրդեան աղքատացումը ու փճացումը երկրին բարեբաւտութեան նպաստելէ բոլորովին հեռի , տարբեր իրողութիւն մը ցոյց կուտան : Ընդհակառակն ազգի ձը հասարակաց պարտքն անոր աղքատութիւնը չ'նշանակէր , կը բաւէ որ ազգային հարստութիւնը կը գտնուի բաղաւտապէս բարձրագոյն աստիճանին վրայ :

ԳՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ . ԵՐ . 8

Հատ . 4 . — « Իրաւունք գործել ամենաարդար եղանակաւ , ա՛յս է գերագոյն բաղձանքը վեհապետին » : կ'ըսէ հեղինակը : Այս բաղձանաց իրագործման համար , հետեւեալ միջոցներն ձեռք առնուած են կը կրկնէ հեղինակը .

« 1 . Նախ հաստատութիւնն իրաւագիտա-

կան վարժարանի մը կարող օրէնսգիրներ պատրաստելու համար 1880 թուականին :

2 . Հաստատութիւն երգման դրութեան , ըստ այս դրութեան որուն նոր ձեռնարկուեցաւ ամեն դատաւոր պաշտօնի կոչուելուն պէս պէտք է առ տէրութիւնն երգում տայ հաւատարմութեան :

3 . Իրաւարար ատեանի մը հաստատութիւնը :

4 . Վճարեկ ատեանի հաստատութիւնը ի Կ . Պօլիս » : Եւ յետոյ հեղինակն պահ մը ձգելով իր քաղցրանուագ ներբողներն կ'սկսի ողբալ եւ հեծել , որ այսքան նպաստաւոր միջոցներու քով կան նաեւ քանի մը ուրիշներ եւս ոյք անցելոյն մէջ շնորհուած ըլլալով ցաւալի հետեւանքներ թողած են եւ որոց վրայ խօսուած է դատական առանձնաշնորհումներ վերնագրոյն տակ :

Հեղինակը չարաչար կը սխալի երբ վճարեկ ատեանի հաստատութիւնը Սուլթան Համիտին կը վերագրէ : Սուլթանի դահակալութեան շատ ժամանակ առաջ Թանգիւնքի հաստատութեամբ դատական վերակազմութիւնը եղած էր . այն ատեանէն գոյուլթիւն ունեցան Նախապետ ատեանը Վերսալէն չեւ Վանաթիկ ատեանները , որոնք զժողապետ սակ բառեր մնացած են եւ ծառայած միշտ Սուլթանի կործանարար քաղաքականութեան օրինակն գործիքներ ըլլալու :

Եւ սակայն ո՞րքան ծիծաղելի ձեռնարկ մ'է որ փաստաբան մը ելնէ երկրի մը մէջ իրաւանց եւ արդարութեան գոյուլթիւնը ապացուցանելու համար իրաւագիտական վարժարանի մը հաստատութիւնը մէջ բերէ իր փաստ : Եւ ինչո՞ւ չուզեր յիշել պարտն փաստաբանը ա՛յն կէտը թէ իր այդ տողերը գրելէն հազիւ քանի մ'ամիսներ առաջ Սուլթանը բացարձակապէս արգելած էր այդ դպրոցներու մէջ հայ ուսանողաց մուտքը եւ միանգամայն միջազգային օրինաց օրէնքի փիլիսոփայութիւնը եւ ուրիշ շատ մը անհրաժեշտ ուսուցումները : ա՛յնպէս որ այդ դպրոցները ցարգ մնացած են իբրեւ կմախք :

Իսկ իրաւանց եւ արդարութեան գոյուլթեանը ու գործադրութեանը համար , Մուսայ Պէյի դատն ի մէջ անթիւ նմանօրինակ գտնուում ա՛յնպիսի հոյակապ փաստ մ'է՝ որուն առջեւ յօգս կը ցնդին Պարտն փաստաբանին բոլոր կարճեցիկ եւ մնացածին փաստերը : Թուրքիոյ մէջ եթէ կայ բան մը որուն պակասութիւնը ամենէն աւելի զգալի է , ա՛յն ալ արդարութիւնն է . եւ Պարտն Փախազեան որ երբեմն առիթն առնեցած է դատարաններու դռները գեղեցիկ եթէ ո՛չ ուրիշներէ լաւ , գէթ անոնց չափ պէտք էր գիտնալ թէ արդարութիւնը ի՞նչ կը նշանակէ թուրքիոյ մէջ :

« Շարունակելի »

ՍՓԻՆՔՍ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— 0 —

Ս . Բէթէրսպուրկ 8 նոյեմ . — « Նուփօէ Վրէմեա » թերթը կ'ըսէ որ Անգլիկներմանական դաշնադրութեան արդիւնքը հակակշռելու համար համաձայնութիւն մը գոյացած է Ռուսիոյ , Ֆրանսայի , Ամերիկայի եւ Ճարմանի մէջ :

Լոնտոն 8 նոյմ . — Լորտ Գիլչէր փօհաննէսպուրկ զնաց , ուրկէ նախալ պիտի երթայ քննական պտոյտ մը կատարելու համար :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Լ'ԱՐՄԷՆԻԻ մէջ կը կարդանք հետեւեալը .

Ինուսի Սարիվալի գիւղը քերտ Բէզկօ սպաննեց Յովհաննէս Մեղքօն եւ ուրիշ քերտեր ծանրապէս վիրաւորեցին մեռեալին եղ-

բայրը Սարգիս : Պատճա՛ռ : Վանքի Յովհաննէս չ'էր ձգած որ այդ քերտերը առւանդեն իր դուստրն ու քոյրը :

ԹԻՔԱԿԱՆ Մուսէնի (Միւղէ) Տնօրէն Համիտի պէյ , Բաւնաւի Տնօրէն Տ . Պատմաճեանի մեծ , Կեղեցիկ , պաշտօն մը առաջարկեց թանգարանին մէջ , բայց Բաւնաւի Տնօրէնը մերժեց յայտարարելով որ չ'կրնար ծառայել կառավարութեան մը՝ որ կը ճգնի բնակիչ ընել իր համացեղները :

ԶՐՈՅՑ կը պտտի թէ Բարիկի թրքական դեսպան Միւսիլի պէյ Կ . Պօլիս կանչուած է եւ այլեւ Ֆրանսա չ'պիտի վերադառնայ , գէթ իբր Սուլթանի ներկայացուցիչ :

ԱՆԳՂԻՈՅ Թագուհուն թուր Բրէնս Գրիսթիան Վիգթօր , որուն թրանսվալի մէջ մահը ծանուցած էինք , հոն պիտի թաղուի ըստ թէ՛ իր եւ թէ՛ ծնողաց փափաքանաց :

ՀԱՐԱԽՍԹԻՆ Ափրիկէի Անգլիական բանակին ընդհանուր հրամանատար Լօրտ Ռօպրթսի դուստրը , որ իր հօրը քով կը գտնուի ի թրանսվալ , աղետապով կը տառապի :

ՎՍԵՄ . ՊՈՂՈՍ ՓԱՇՍ . Նուպար Բարիկի Արուեստահանդէսին Օսմանեան բաժնին մէջ ելել քարական արօր մը ցուցադրած էր որ արծաթ շքագրամ մը ստացած է այս անգամ :

Ֆրանսայի գիտական եւ երկրագործական թերթերը յօդուածներ նուիրած են Հայ մասնագէտին այս աշխատութեան նրկատմար , որ իր տեսակին մէջ լաւագոյնն է , ինչպէս ապացուցուած է եղած փորձերով եւ քննութիւններով : Այդ թերթերը կը խօսին նաեւ Վ . Պօղոս փաշային գիտական կարողութեան վրայ եւ կը բացատրեն իր այս գիտին արհեստական եւ գիտական կարեւորութիւնը :

Կ . ՊՈՂՈՅ Ազգ . Պատրիարքարանը Աջդեան Պատրիարքի քրոջ գէմ ունեցած դատը կորսնցուցած է , որ Արմաշու վանքին կտակուած 500 ոսկեոյ խնդիրն էր :

Այլդեան ուխտ ըրած է որ իր մահուանէն վերջ ալ հաւածէ Հայ ազգը . . . այս անգամ իր քրոջ ձեռքով :

ԱՐՇԱԼՈՅՍԻ 122րդ . թուոյն առաջին հանելուկի լուծումը կատարելով մեզ զրկած է Ռոտոսթօցի Պր . Միհրան Կ . Փօրեաճեան :

Հանելուկի նիւթն է — Մեղրայուսին :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ն . Բ . ԽՏԻՎԸ անցեալ օր իր Հօր գերեզմանը այցելեց Միջնաբերդի մզկիթին մէջ , եւ իր ուրբաթի աղօթքը կատարեց Իմամ Շաֆէի մզկիթը : Յետոյ Ն . Բ . նախաճաշեց Ապտինի պալատին մէջ եւ կէս օրէն ետքը ընդունեց Ֆրանսայի , Կերմանիոյ , Աւստրիոյ եւ Հոլանտայի ներկայացուցիչները , որոնք դեռ նոր վերադարձան իրենց արձակուրդէն :

ԲՐԷՆՍԻՍ ՆԱԶԼԸ ՀԱՆԸՄ եւ իր ամուսինը Խալիլ պու Հակ չորեքշաբթի իրիկուն թրիէսթէն հոս հասան :

ԾԱՄԱՆԱԿԸ ՊՐԱՍ Ե

Հետեւեալ հրապարակային շնորհակալեաց երկտողին հրատարակութիւնը կը խնդրուի մեզմէ :

Հրապարակաւ կուգամ խորին շնորհակալիքս յայտնել Տիրար Տոք. Ն. Քէչէճեանի, այն բժշկական գործողութեան համար, զոր ամենայն յաջողութեամբ և ճարտարութեամբ կատարեց իմ անձիս վրայ :

Արտաշէս Մարտիան

ՍԱՅԻՏԱ ՉԼՅՆԱՊԻ ԵՐԲԵԱԿ ՄՊԱՆՆՈՒԹԻՒՆԸ. — 60 տարեկան պառու մը, պառու խափշիկուհի մը և դեռատի ծառայ մը սրտայոյզ կերպով խողխողուած գտնուեցան անցած չորեքշաբթի օր :

Աղանի գնելու համար թաղին փոքրիկ աղջիկներէն մին ներկայացաւ այն տան ուր պառուը կը բնակէր, և որուն միակ գործըն էր աղանեկաճառութիւն : Գտնուելը չը կրնալով իր բաղխումները լսելի ընել տան բնակիչներուն, խնդրեց կնոջմէ մը որպէս զի քաջէ դժնտիակի չուանը, որ կախուած էր դուրսի կողմը : Երբ դուռը բացուեցաւ, կինն ու աղջիկը առջևը գտնուեցան պզտիկ ծառային, որ կողորդը բացուած գետնատարած մնացած էր : Անմիջապէս խուռն բազումութիւն մը ներս խուժեց, և ձերբակալեց անհատ մը որ փախչելու ճիգեր կ'ընէր : Այս միջոցին հասաւ նաև ոստիկանութիւնը, և տան մէջ գտաւ երկու պառուներուն դիակները :

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

Ի ԵՐԶԱԿ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարս Պապ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ ԿՄԱՆ կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաին դիմացը, նորաչէն խանութներուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ. յաճախորդք ըստ ամենայնի զո՛ս պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր եւ ճաշակաւոր զրեստներ ունենալով :

Ա Ձ Դ

Եգիպտոսեան աղգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիրար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արեւելեան Մամլոյ ներկայացուցիչն և Գործակալն եղած է Տիրար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, դիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով : Բաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ զուճար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Աղգ. վարժարանն ի Տարապէլ-Կիւնէնս :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Անգղիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ. Սիրունեան դոհացում տալու համար շատ մը երիտասարդաց փափաքին՝ էօզպէքիյէ Մօնթէ Քառլօ Պօտէկայի ճիշտ գէմը իւր տան մէջ Անգղիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նորագոյն մէթոտով կ'ուսուցանէ միմիայն ՎեՅ ԱՄՍՈՒԱՆ կարճ ժամանակամիջոցի մէջ լաւ կարդալ, գրել և խօսիլ սոյն ամենակարեւոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իւր ստանը, ուր կրնան դիմել նաև անգղիերէն աղերսագիր ևն. գրել տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տունները այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԻ ՍԿԶԲԸ Օտանիյի դեղատանին դիւնայի փողոցին մեջ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարսեր, Երջաքերակակներ, Գիւրջեր, Հրախարսեր, Մահազղներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

Ա. ՊԱԼԵԱՆ Մ Ա Ք Ի Լ Տ (Գաղթականաց կիանքէն) ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՍ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns and 6 rows of numbers: 2504 5123 104 3766 423 9914, 2597 8652 7496 7800 7495 6481, 9990 4005 3657 3890 6508 3450, 5368 7464 946 9200 2075 7451, 3833 9543 891

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒՎ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատար իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութեան մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Քանի որ Սէլվաճեան վաճառատան մէջ (Խ Մուքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և օքսիտէ ժամացոյցներ. պատի և քօնսօլի բազմազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան մօնօկրաֆներու :

ԱԻԱԶԱԻՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մազաղածեայ բըժըշկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ, օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ, կը փութամ յայտարարել աւագախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս դեղագործներու և բժշկաց՝ որպէսզի ուշադրութիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ :

Աւագախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է դիմել ստորագրելոյս հասցէին Ի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ, ՄՈՒՉԻԲԻ ԶՕՐԱՆՈՑԻՆ ԴԻՄԱՑ — Մէյրան ԱՊՏԻՆ :

Գիները 10 ֆրնդ մէկ բաժին աւազ ունեցողի 20 » երկու » քար ունեցողի . 30 » երեք » արմատացած հիւանդութեանց :

Սոյն դարմանը գործածուած օրէն իսկ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելագոյն առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները :

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

ՀԱԻԱՔԱԾՈՑ ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՌԶ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյին գնել փափաքողներն կամ բաժանորդսուրուիլ ուղղորդեն, կրնան դիմել՝ Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնին :

Այստարի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութեանէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յ'Աղգ. քսանդրիս :